ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	գլխարկներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	« Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Կեպին մուգ կապույտ Midnight Navy (սև երանգին մոտ) գույնի, սանդոս կտորից: Բաղադրությունը՝ 55%, ±3% բամբակ, , 45%, ±3% պոլիէսթեր, քաշը 1մ2 240գրամ, ±3%: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: Գլխարկահովհարի հաստությունը՝ 3մմ, իսկ երկարությունը

					կենտրոնական մասում 7 սմ, որի եզրագիծը սպիտակ կտորով մշակված։ Թասակը բաղկացած է հինգ կտորից, որոնք վերևի կենտրոնական մասում ունեն ասեղնագործված օդանցքներ։ Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն։ Թասակը միացված է գլխարկահովհարին 3սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար։ Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7մմ հեռավորությամբ։ Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ։ Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը։ Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ ետևում 1X8սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը։ Գլխարկը պետք է ունենա կլոր

					թասակ։ Ետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5-8սմ։ Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնիքված նմուշ։ Ապրանքը ընդունվում է հաստատված նմուշի համաձայն։ Չափսերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ։ Արտաքին տեսքը՝ լուսանկարին համապատասխան։ Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 25 հատ, որը տեղադրվում է ստվարաթղթե արկղի մեջ, յուրաքանչյուր արկղի մեջ 100 հատ։ Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը։ Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					